Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավատերյուն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դուք կարող եք.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը առևտրային հասար նպատ

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

=129=

Խ. Ս. Հ. Մ. Հ. Խ. Ս. Հ.
Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

64

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Կազմեցին Լուսժողկոմատի յեվ Հայկակոմ
Դիվիզիայի մի խումբ աշխատակիցներ

ՊԵՏՀԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ—1926

ԱԳ-2
689

Խ. Ս. Հ. Մ. Հ. Ս. Խ. Հ.

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Կազմեցին Լուսժողկոմատի յեվ Հայկական Դիվիզիայի մի խումբ աշխատակիցներ



ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ—1926

БУКВАРЬ КРАСНОАРМЕЙЦА

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

По заказу Государственного Военного Издательства исполнено Московским Акционерным Издательским Обществом.

МОСКВА—1926

689- Ա 9-Հ

Գրառեպվար 269 բ. Տիրաժ 3000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

I.

բանակը ուժ է

ուժ է բանակը

ուժ է մեր բանակը

մեր բանակը մեր ուժն է

Հարցեր. ա) Նայեցեք այս նկարին։

բ) Ի՞նչ է անում բանակը։

գ) Ո՞ւմ է պաշտպանում մեր բանակը։

II.

Մեր բանակը աղա չունի



աղա չունի
մեր բանակը

մեր բանակը
կարմիր բանակ է

կարմիր բանակ
է մեր բանակը

կարմիր բանակը ուժ ունի
մեր բանակը մեր ուժն է։

Հարցեր. ա) Ո՞վ է աղան։
բ) Ինչո՞ւ աղային հրացան չենք տալիս։
գ) Կուլակի աղան ի՞նչ աշխատանք է տանում բանակում։



III.

դասակը դասի է



դասի է դասակը.

կարմիր դասակը ուսում ունի.

դասակը ուսում ունի ուժ ունի.

ուսում ունես ուժ ունես.

ուսում չունես ուժ չունես։

IV.

դասակ ու դասակ կազմում են բանակ

դասակը բանակի մասն է.

կարմիր բանակն ունի դասակներ.

դասակը ուսում ունի ուժ ունի.

ուժեղ դասակներ—ուժեղ բանակ։

դա-սակ ու դա-սակ



V.

ուզումես հաղթել յեղիր կարգապահ

կարգապահ յեղիր, վոր շուտ սովորես
ու հաղթող լինես.
կատարիր պետի հրամանը—
պետը ավելի գիտակ ե.

հաղթել կարող ե կարգապահ դասակը.
կարգապահը գիտակ ե, կարող ե, հաղթող ե։

ու-զում ես հաղ-թել, յե-ղիր կար-գա-պահ։

VI.

մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար

կարմիր զինվոր ու կարմիր պետ
միշտ համամիտ, միշտ իրար հետ.

քաջ յեղիր ու կարգապահ,
վոր հաղթող լինես,

յեղիր քաջ, շիտակ ու ընկերասեր.
քաջ մարտիկը կըմեռնի, ընկերոջը կազատի.

մե-կը բո-լո-ըի հա-մար, բո-լո-ըը մե-կի հա-մար

մեկը բոլորի համար—
բոլորը մեկի համար:

VII.

բանվորի և գյուղացու ունեցվածքը մերն է

ժողովրդի ունեցածը քոնն է—աչքի լույսի պես պահիր.
խնայիր, խնամիր, պահիր քո ձին, հրացանը, հագուստը, զորանոցը.
այդ բոլորը ժողովրդական ունեցվածք է
առաջ աղան եր տերը, հիմա մենք։

աղ ա-ղա	ա Ա.	ա Ա
աղա, աղ աղա	ղ Ղ.	ղ Ղ

աղ աղա, աղմ—եղ աղա չկա



VIII.

Կարմիր բանակային պետք է մաքրասեր լինի

մաքուր լինես՝ առողջ կլինես,
վոր առողջ լինես, լավ կըսովորես,
վոր լավ սովորես—հաղթող կլինես.

վոչլոտ զինվորը կես զինվոր է.
բանակը ուժեղ է, յերբ նա առողջ է։

ոգկրվիր թարմ ոդից, արևից, զրից.
Մի թիր հատակին.

լինի	լի-նի	ի Ի	ի Ի
լինես	լի-նես	ս Ս	ս Ս

IX.

Կարմիր բանակի գաղտնիքը լավ պահի

Թշնամին լսում է—
գաղտնիքդ նրան մի՛ ասի.
Թշնամին էլ ունի գաղտնիք—
նա մեզ չի՛ ասում.
գաղտնիք դու էլ ունես, սուս արա։

ունես	ու-նես	ու Ու	ոչ Ոչ
ունի	ու-նի	ն Ն	ն Ն

Սովորի գաղտնիք պահել, Թշնամին քնած չէ.
Թշնամին ամեն բան իմանա, մեր բանը կըվատանա։
Շատ խոս մի՛ լինի—մնաս կըքերես կարմիր բանակին. յեղի՛ր գաղտնապահ։

X.

Հանցանքը պատժվում է լավ գործը խրախուսվում

Կատարի՛ր հրամանը, վոր չպատժվես։
Սուրենը սիրով եր պետի պատվերը կատարում.
Նրան սիրում էյին պետն ու ընկերները, իսկ Թշնամու հաժար սուր աչեզ եր նա։

ընկեր, ըն-կեր	ը Ը ը Ը
սեր, եր, ե	ե Ե ե Ե
ուներ ու-ներ սի-բում	ր Ր ր Ր

Արսենը կարգապահ չեր. նրան չեյին սիրում, պատ-ժում եյին։

Պարարապանց կարմիր գինվորը աշխատավորի թշնամին է.

XI.

Կարմիր բանակայինը քաղաքացի և մարտիկ է

Կարմիր մարտիկ, ընտրիր խորհրդի անդամ.
Կարմիր բանակայինը ցարի զինվոր չէ,
նա նույն քաղաքացին է.
Կարմիր բանակայինը պատշպանում է աշխատավորին.
Այսոր նա սուր ունի, վաղը մանգաղ և արոր կունենա։
Կարմիր մարտիկը պաշտպանում է մեզ։

կար-միր	կ Կ կ Կ
	մ Մ մ Մ
մար-տիկ	տ Տ տ Տ

Սուրենն ու Աղասին կարմիր մարտիկներ,
սարերում արտ ունեյին, արտի մոտ տուն ունեյին։
Մի տարի կարմիր տարի եր։

Ահա, Աղասին կարմիր մարտիկ է. կին ու տղա չի կողմ—սուրն է եսոր նրա ընկերը։

XII.

պետը կարմիր բանակայինի մեծ ընկերն է

Աշխատանքի ժամանակ մեկը սովորեցնող է, մյուսը սովորող։
ցարական բանակում այսպես չէր — մեկը ստրուկ էր, մյուսը բռնակալ.
մեկը ծեծում էր, մյուսը լռում։
յեղիր համարձակ, բայց համեստ։

յեղիր յե-ղիր	յե Յե	յե Յե	
սովորող սո-վո-րող	վ Վ	վ Վ	

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12

XIII.

կարմիր բանակայինի տանը ոգնում են

Գյուղի տղա, գալով բանակ
տունդ անտեր չի մնա.
ով բանակ գա, լավ իմացիր,
տուրք ու հարկ նա քիչ կտա։

Ով գա բանակ, նրա բանը գյուղում անտեր չի մնա,
նրան կոգնեն, վոր սովորի, ընկերից յետ չի մնա։

բո-լո-ը	ո Ո	ռ Ռ
ոգ-նե-լու յեն	գ Գ	գ Գ
բա-նա-կա-յի-նին	բ Բ	բ Բ

Բաբկեն, յեկար բանակ, ասա, սրտով ես սովորում։ Նամակ գրիր գյուղ, տես, գյուղն ոգնում է յեղբայր Գուրգենին։

Յերևանի գավ.
Յուվա գյուղ
Գուրգեն Բաբայանին

Յեղբայր Գուրգեն,

ես մի ամիս է, յես Կարմիր բանակումն եմ։ Սեսանում ես, յես նամակ եմ գրում։

Գրիր, գյուղն ոգնում է մեր տան բանին, վոր յես սրտով սովորեմ։

Բաբկեն

10/XI 1925 թ.

XIV.

Գյուղի Նախագահ, ոգնելես կարմիր բանակայինի տանը

Բանակ մտնողը բացի դրանից
ունի ոգուտներ յեվ ուրիշ կողմից—

Նրա սերմացուն սերմկոմը գյուղի
տալիս է հորը, վոր տանի ցանի։
ցորեն ցանելը լավ է, ցանքսը կրելը՝ ավելի լավ է։

ցո-րեն ցա-նե-լը	ց Ց	ց Ց
լավ է	լ Լ	լ Լ

Մարկոսը 22 տարեկան էր, նրան կարմիր բանակ տարան։ Նրա մայրը մենակ ու անտեր մնաց. բայց ընկերները վար ու ցանը արեցին։ Մարկոսը գնաց, նրա բանն էլ լավ գնաց։

XV.

մեր նոր դասակապետը

Մեր դասակապետը դիվիզիայի հրամանով ազատվեց բանակից։ Նրա տեղը նշանակվեց դասակապետի ոգնական Զարչյանը։ Ընկեր Զարչյանը կարմիր հրամանատար է, նա ավարտել է ռազմական դպրոցը։ Մինչև դպրոց գնալը յեղել է առաջին գնդի, յերկրորդ վաշտի, յերրորդ դասակի կարմիր բանակային։ Զարչյանը աղքատ տան տղա յե։ Նա դատի տակ չի յեղել, պետի հրամանները կատարել է։

հրա-մա-նա-տար	հ Հ	հ Հ
Զար-չյա-նի	չ Չ	չ Չ
դա-սա-կը դա-սի յե	դ Դ	դ Դ

Մեր գնդիս յերկու դասակ գնացել են Մոսկվա ցուցահանդես: Նրանց դիմավորել է ընկեր Բուբնովը:

Ո՞վ է ընկեր Բուբնովը:

XVI.

Կարմիր բանակը աշխատավորի հարազատ զավակն է

Հին բանակի զինվորը կալվածատիրոջ ծառան եր։ Նոր զորքը բանվորն ու գյուղացին է, վոր ծառայում է ինքն իրեն։

ա-ռաջ զին-վո-ը	զ Զ	ց Ձ
ծա-ռա յեր	ծ Ծ	ձ Ձ
մենք ծա-ռա չենք	ք Ք	ֆ Ֆ

Կարմիր բանակայինը նույն բանվորն ու գյուղացին է, միայն զինված։ Ցարական զինվորը յեվ բանվորն ու գյուղացին ոտար եյին իրար։ Ներկայիս կարմիր բանակայինը նույն բանվորի ու գյուղացու հարազատ զավակն է. նա իր քաղաքավարի վերաբերմունքով որինակ է լինելու ամենքին։

Յերկրորդ գնդի կարմիր բանակայինները ներկայացում տվին Դաեղում: Ներկայացումը շատ անուշ:

XVII.

Բանվորն ու գյուղացին բերին հոկտեմբեր

Հազար ինն հարյուր տասնյոթ թվի փետրվարին
բանվորն ու գյուղացին դեն գցեցին թագավորին։
Շշկլվեցին ու խաբվեցին խարդախ աղից,
Հոկտեմբերին գլխի ընկան, թոկը գցին նրա վզից։

ըն-կավ թա-գա-վո-րը	թ Թ	թ Թ
խար-դախ ա-ղեն խա-բեց	խ Խ	խ Խ
աշ-խա-տա-վո-րը շշշ-կլլ-վեց	շ Շ	շ Շ

Բանվորը ինքն է իր ազատությունը դարբնում։
Մեր հույսը մենք ենք.
Մեր իրավունքը, մեր յերկիրն ու անկախությունը
չենք տալ վոչ վոքի։

Ո՞վ է թերել մեր շատ որը—
գյուղացին ու բանվորը:



XVIII.

Հասանի, Թալիկոյի և Պետրոսի ջանքերով Անդրկովկասը դարձավ խորհրդային

Ադրբեջանի բանվորները ապրիլին ուժ տվին ու պաշտպանեցին Կարմիր բանակին։

Զա-մալ, Ա-դըր-բե-ջան	ջ Զ	զ	Ձ
Պետ-րոս պաշտ-պան	պ Պ	պ	Պ
ժա-մա-նակ ուժ	ժ Ժ	ժ	Ժ

1920 թվի ապրիլին Ադրբեջանի բանվորությունը դեն շպրտեց ատելի խան ու բեգերի իշխանությունը։ Նոյեմբերին Հայաստանի աշխատավորությունը վռնդեց տիրացու դաշնակներին իր մաուզերիստներով, իսկ 1921 թվի փետրվարին Վրաստանի բան-

վոր գյուղացիությունը յերկիրը մաքրեց կնյազ մենշևիկներից, փարվելով ազատաբեր XI-րդ բանակին։

XIX.

Կարմիր բանակը ճեղքեց մուսավատական ճակատը

Ճռճռան ճառի ժամանակն առաջ եր, այժմ դեպի գործ. ճանապարհ ճնշվածներին ու նոր կյանք կառուցողներին։

ճրռ-ճր-ռան ճառ | ճ ճ ՛ Ճ ռ Ռ ռ Ռ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

I.

1918 թվին Բագվի բանվորները վոտքի կանգնեցին ու ցանկացան Խորհրդային Ռուսաստանի հետ մի ճակատ կազմել։ Մենշևիկ ես-եր դավաճանները կարողացան անգլիացիների ոգնությամբ տապալել Բագվի խորհրդային իշխանությունը և գնդակահարել Շահումյանին, Զափարիձեյին, Ազիզբեկովին, Պետրովին և մյուս կոմիսարներին։ Մենշևիկների ու ես-երների կյանքը յերկար չտևեց, նրանց դուրս քշեցին խաներն ու բեգերը։

II.

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները ապստամբեցին

բեկերի ու խանների մուսավաթական կառավարության դեմ, պապալեցին նրան և Կարմիր բանակի ոգնությամբ խորհրդային իշխանություն հաստատեցին:

XX.

Փառք ձեզ մայիսյան հերոսներ

Հեղափոխության փշոտ ճանապարհին ընկան հայ աշխատավորության անձնազոհ զավակները՝ Մուսայելյան, Փանյան, Ղարիբջանյան, Խաչատրյան:

փառք հե-ղա-փո-խու-թյան	փ Փ	փ Փ
փառք ձեզ անձ-նա-զոհ ըն-կեր-ներ	ձ Ձ	ջ Ջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

1920 թվի մայիսին մեկը մյուսի յետևից գլուխ բարձրացրին դաշնակցական կառավարության դեմ Լենինականի, Ղարսի, Ղազախի, Բայազետի բանվորները ու գյուղացիները, բայց դաշնակցական ձրիակեր վարձկանների ձեռքով շարժումը ճնշվեց, տալով մի շարք անձնազոհ հերոսներ:

Փառք ընկածներին:

Նույն թվի նոյեմբերի 29-ին նորից շողայինն մասուղերիայի շրջակերների գլխին հայաստանի մուրճ ու մանգաղը: Վարչականները յերկրից

դուրս շպրտվեցին, ու իշխանությունը հանձնվեց խորհուրդներին:

Փաստ հեղափոխության:

XXI.

Մենշևիկյան Վրաստանը հակախորհրդային վերջին ֆրոնտն էր Անդրկովկասում

Սոցիալ-դեմոկրատական կուսակցության մենշևիկյան ֆրակցիան յեվ ուրիշ կուսակցություններ չկարողացան դիմանալ՝ ճեղքվեց նրանց ֆրոնտը, յեվ հաստատվեց խորհրդային իշխանություն:

Ֆրոնտ և ֆրակ-ցի-ա	Ֆ Ֆ և	ֆ և	ֆ	յեվ = և

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

1918 թվից Վրաստանն իրանց ճիրանների մեջ առան բանվորական գործի դավաճան մենշևիկներն ու սկսեցին իրենց ավազակային քաղաքականությամբ ծծել աշխատավորների արյունը:

Վախենալով բանվորա-գյուղացիական ապստամբությունից՝ յերկիրը լցրին գերմանական, անգլիական զորքերով: Ադրբեջանի և Հայաստանի խորհրդայնացումից հետո յեվրոպական թալանչիների զորքերը թողին մենշևիկյան Վրաստանի սահմանները: Այնուհետև 1921 թ. փետրվարի 25-ին Բորչալուի և Սանահնի ապստամբությամբ Վրաստա-

նում հաստատվեց խորհրդային իշխանություն։ Մենշևիկները թողին կռվի ֆրոնտը և վոսկու պարկերով փախան Ֆրանսիա, Անգլիա և ուրիշ յերկրներ։

XXII.

ՆԱՄԱԿ ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐԻՆ

Յես այժմ գրում եմ քեզ, և դու կարդում ես իմ նամակը։ Գրագիտությունը կապում է մեզ իրար հետ։ Այդ է նրա մեծ ուժը։

Այն բոլորն, ինչ մարդկային հազարավոր սերունդներ մինչև այժմ կատարել, սովորել, տեսել և զգացել են, գրված են գրքերում։ Յեվ վորովհետև դու գրագետ ես, այդ բոլորը քեզ մատչելի յե։

Քեզ կարդալ-գրել սովորեցրեց կարմիր բանակը։ Յեղբայրաբար շնորհավորում եմ քո այդ մեծ հաջողությունը։ Այժմ դու ձեռքումդ ունես գիտության դռները բացող բանալին։ Բայց տես՝ կես ճանապարհին կանգ չառնես։ Ով կիսագրագետ է, նա շուտ է մոռանում և անգրագետ դառնում։ Պետք է սովորել առանց դժվարության, սահուն և ազատ կարդալ։

Յուրաքանչյուր ազատ բոպեյին պիտի կարդալ, գրել և վերջնականապես գրագետ դառնալ։

Հենց վոր մեր յերկրի վերքերը բուժենք, բարձրացնենք մեր տնտեսությունը, լավացնենք ու գեղեցկացնենք մեր կյանքը, մեր ամբողջ ազգաբնակությունը կազատվի տգիտության խավարից և կըշարժվի դեպի առաջ։

Նայիր, ընկեր, յետ չմնաս։
Սովորիր, ժամանակ մի՛ վատնիր։
Հավասարվիր առաջավորներին։

ՈՐԱՑՈՒՅՑ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՈՆԵՐԻ ՅԵՎ ՍԳՈ ՈՐԵՐԻ

1. Հոկտեմբերյան հեղափոխությունը — 7 նոյեմբերի
2. Փետրվարյան հեղափոխությունը — 12 մարտի
3. Բանվորուհիների միջազգային տոն — 8 մարտի
4. Պրոլետարիատի միջազգային տոն — 1 մայիսի
5. Միջազգային յերիտասարդական որը — յուրաքանչյուր սեպտեմբերի I կիրակին
6. Բանվորների զնդակահարումը Պետերբուրգում ցարի հրամանով և Վ. Ի. Լենինի մահվան որը - 22 հունվ. (9 հունվ.)
7. Խ. Ս. Հ. Մ.-ն տոնը — 6 հուլիսի
8. Հայաստանի խորհրդայնացումը — 29 նոյեմբերի։

Ա ա	Բ բ	Գ գ	Դ դ	Ե ե	Զ զ	Ը ը	
Ի ա	Բ բ	Գ գ	Դ դ	Ե ե	Զ զ	Ը ը	
Թ թ	Ժ ժ	Ի ի	Լ լ	Խ խ	Ծ ծ	Կ կ	
Թ թ	Ժ ժ	Ի ի	Լ լ	Խ խ	Ծ ծ	Կ կ	
Հ հ	Ձ ձ	Ղ ղ	Ճ ճ	Մ մ	Յ յ	Ն ն	
Հ հ	Ձ ձ	Ղ ղ	Ճ ճ	Մ մ	Յ յ	Ն ն	
Շ շ	Ո ո	Չ չ	Պ պ	Ջ ջ	Ռ ռ	Ս ս	
Շ շ	Ո ո	Չ չ	Պ պ	Ջ ջ	Ռ ռ	Ս ս	
Վ վ	Տ տ	Ր ր	Ց ց	Փ փ	Ք ք	Օ օ	Ֆ ֆ
Վ վ	Տ տ	Ր ր	Ց ց	Փ փ	Ք ք	Օ օ	Ֆ ֆ

Ո՞վ է պաշտպանում մեր յերկիրը—
— Կարմիր բանակը։
Ո՞ւմ է պաշտպանում Կարմիր բանակը—
— Աշխատավորին։
Ո՞վ է կարմիր բանակայինը—
— Նույն աշխատավորը։

Այսոր նա սուր ունի, վաղը մանգաղ և արոր կունենա։

Կարմիր բանակայինը պետք է գրագետ լինի, վորովհետև ուսումն ուժ է. անգրագետն անուժ է։

Հարց.— Ցե՞ր է Կարմիր բանակի տոնը։

---

1. Կարմիր բանակին.

Կարմիր բանակ,
Կարմիր բանակ,
Նոր աշխարհի
հիմնադիր,
Թուր ու դանակ,
հուր ու կրակ,
դու հարուստին
դավադիր։
Դու հուրն անցար,
դու սուրն անցար,
կյանքիդ գնով
ստեղծեցիր
նոր աշխարհ։

Քո մեծ գործը,
անմահ գործը
չի մոռանա
պատմությունը
դարեդար։
Դու մեծացիր
ու բոյ քաշիր,
կարմիր արև,
կուռ բանակ։
Դու չար սարդին
հարուստ մարդին
հուր ու կրակ,
թուր-դանակ։

---

2. Այս տարի կռիվ կլինի.

Դու այդ չգիտես։

Յես էլ չգիտեմ։

Բանվորա-գյուղացիական իշխանությունը կռվել չի ուզում։ Իսկ մեր թշնամիները՝ բոլոր յերկրների թագավորները, կալվածատերերը, գեներալները։

Նրանք սրում են իրենց դանակները։

Նրանք սպասում են միայն հարմար ժամի, վոր մեզ մահացու հարված հասցնեն։

Մի՞թե անձնատուր կլինենք։

Յերբեք։

Մեր ազատությունը, մեր յերկիրը, մեր անկախությունը կպաշտպանենք։

---

3. Թշնամուն խփիր, մի՛ խնայիր.

ՊԱՅՔԱՐ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ.

Յերբեք թշնամուն թույլ մի համարիր։ Թե ուժեղ և թե թույլ թշնամուն վերաբերվիր ամենայն ուշադրությամբ, մանր բաները աչքաթող մի արա, և յերբ պայքարը սկսվել է, նրան մինչև վերջ հասցրու։

Յեթե կա մասնավոր հաջողություն, ուժերդ կրկնակի լարիր, խփիր յեռակի, մինչև վերջ հասցրու, մինչև վերջնական հաղթանակ, մինչև թշնամին վերջնականապես կջախջախվի։

---

4. Քաղդեկի զրույցներից.

ՔՈ ՀԱՐԵՎԱՆԻՆ ՄԻՇՏ ՃԱՆԱՉԻՐ.

Միությանն հարևաններն են՝ պանական Լեհաստանը, բոյարական Ռումինիան, կապիտալիստական Ֆինլանդիան, Եստոնիան և Լատվիան։

— Իսկ գիտե՞ս ով է կանգնած նրանց թիկունքում.— Ֆրանսիան և Անգլիան։

— Իսկ նրանց ռազմական ուժերի մասին լսե՞լ ես։

Լեհաստանը 27 միլիոն բնակիչ ունի, իսկ 350,000 զինվոր։

Ռումինիան ունի 250,000 զինվոր, իսկ պատերազմի ժամանակ՝ մինչև 2 միլիոն։

Ֆինլանդիան ունի 30,000 զինվոր և մոտ 100,000՝ կամավոր կազմակերպություններում, մինչդեռ բնակիչների թիվը 3 միլիոն 300 հազար է։

Եստոնիայում — 16,000։

Լատվիայում — 20,000։

Ֆրանսիայում — 700,000։

Մենք նրանց առաջարկեցինք զինաթափվել, իսկ նրանք հրաժարվեցին։

Մտածիր, ինչո՞ւ։



5. Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

Ամբողջ աշխարհի պրոլետարիատը պայքարում է իր ազատության համար, նա ստեղծում է կոմունիստական կուսակցություններ, կազմակերպում է պրոլետարական հարյուրակներ և զինում է նրանց։ Կապիտալիստներն ստեղծում են ֆաշիստական (սև-հարյուրակային) ջոկատներ և ցանկանում են խեղդել բանվորներին։ Կռիվը չե վերջացած։ Կապիտալի և աշխատանքի պայքարը դեռ շարունակվում է։

Մահ ֆաշիստներին։

Մահ բանվոր դասակարգի դահիճներին։

Համաշխարհային պրոլետարիատի և հեղափոխության առաջնորդ Վլադիմիր ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆ



Վլադիմիր Իլյիչը ծնվել է 1870 թվի ապրիլի 10-ին Սիմբիրսկ քաղաքում։ Մեռել է 1924 թվի հունվարի 21-ին Մոսկվայի մոտ գտնվող Գորկի գյուղում։

---

6. Լենինի կյանքը.

Վլադիմիր Իլյիչ Լենինը ծնվել է 1870 թվականի ապրիլի 10-ին Սիմբիրսկ քաղաքում։ Լենինի յեղբորը՝ Ալեքսանդրին կախել է ցարական իշխանությունը։ 1887 թվին Վլադիմիր Իլյիչն ավարտելով գիմնազիան՝ մտնում է Կազանի համալսարանը, վորտեղ և հարում է բանվորական շարժմանը։ Այդ ժամանակից Վլադիմիր Իլյիչն իր ամբողջ կյանքը նվիրում է աշխատավորության ազատագրման գործին։ 1895 թվին յերիտասարդ Լենինն աշխատում է Պիտերում, ուր կազմակերպում է բանվորական խմբակներ։

1897 թվին ցարական վոստիկանությունը Լենինին ձերբակալում է և աքսորում Սիբիր։ Յերեք տարի նա անց է կացնում հեռավոր Սիբիրի աքսորավայրում։ Ցարական վոստիկանությունը հնարավորություն չի տալիս Վլադիմիր Իլյիչին աշխատելու Ռուսաստանում, և նա ստիպված է լինում մեկնել Շվեյցարիա։ Բայց այդ հանգամանքը ևս չի կտրում նրան Ռուսաստանի հեղափոխական շարժումից։ Յեվ նա դառնում է հեղափոխական պայքարի ղեկավար և Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության առաջնորդ։ 1917 թվի հոկտեմբերին Վլադիմիր Իլյիչը ղեկավարում է բանվորների և գյուղացիների պայքարը՝ ուղղված կապիտալիստների և կալվածատերերի դեմ։ Այդ պայքարը վերջանում է հաղթությամբ։ Այդ ժամանակից Լենինը ընտրվում է Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ և այդ պաշտոնը տանում է մինչև իր մահը։

1924 թվի հունվարի 21-ին մեռավ Վլադիմիր Իլյիչ Լենինը, բայց մնաց նրա ստեղծած Կոմունիստական Կուսակցությունը, որ անշեղ կատարում է նրա ավանդները։

---

7. Լենինը չկա։

Լենինը չկա...

Այդ խոսքերը փչում են գիտակցության մեջ, ինչպես հսկա ժայռը՝ ծովում։

Ի՞նչպես կգնանք առաջ... Լենինիզմի լապտերը ձեռքներիս։

Կգտնենք արդյոք ճանապարհը... Կուսակցության կոլեկտիվ մտքով ու կոլեկտիվ կամքով կգտնենք։

Վշտի ու սգի մեջ սեղմենք մեր շարքերն ու միացնենք մեր սրտերը նոր պայքարների համար։

Ընկերներ, յեղբայրներ, Լենինը մեզ հետ չե։

Մնաս բարև, Իլյիչ, մնաս բարև, առաջնորդ։

---

8. Նամակ։

Սիբելի ընկեր։

Նամակ եմ գրում, վոր իմանաս, վոր յես հիմա գրագետ եմ։ Կարմիր բանակում բոլորն աշխատում են գրել-կարդալ սովորել։

Մի տարուց հետո բոլորն ել գրագետ կլինեն։ Եդ որը բախտավոր որ կլինի մեզ համար։ Շուտ-շուտ նամակ գրիր։ Հիմա կարող եմ նամակներդ կարդալ։

Բարևներս բոլորին։

Քո ընկեր, կարմիր բանակային Արամ Գրիգորյան։

---

9. Անգրագետ.

Իր վորդուց մայրը
նամակ ստացավ,
կարոտած սիրտը
վեր ու վար յեղավ։
Նայում է նամակին—
սիրուն նշաններ,
բայց այդ գրերի
միտքը չգիտեր։

Տղան ինչ է գրել—
պետք է իմանար,
բայց նրա տանն ել
կարդացող չկար։
Դուրս յեկավ փողոց,
մի քարի նստեց,
գյուղի դպրոցի
սանին պատահեց։

Յեվ նրան կանչեց.
«Դպրոցի տղա,
մոտս յեկ, ապրես,
նամակը կարդա»։

---

10. Խորհրդային իշխանությունը Հայաստանում.

1920 թվի նոյեմբերի 29-ից առաջ Հայաստանում իշխում ելին դաշնակները։ Դաշնակների իշխանության որով Հայաստանում միշտ կռիվներ ելին տեղի ունենում։ Գյուղացիների տնտեսությունը քայքայվել եր։ Հայաստանի աշխատավորությունը կտրված եր Խորհրդային Ռուսաստանից։

1920 թվի մայիսին Հայաստանի բանվորները ապստամբեցին դաշնակների դեմ։ Նրանք լավ չելին կազմակերպվել։ Այդ պատճառով դաշնակները ճնշեցին աշխատավորների ապըստամբությունը։

Նույն տարվա նոյեմբերին Հայաստանի աշխատավորները նորից ապստամբեցին։ Այս անգամ նրանց ոգնության հասավ Կարմիր բանակը։ Դաշնակները փախան, Հայաստանում հայտարարվեց խորհրդային իշխանություն։

Այն որից մինչև այժմ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կառավարում են իրենց յերկիրը։

Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը մտնում է Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ, վորպես դաշնակից յերկիր։

Անդրկովկասյան Խորհրդային Հանրապետությունը մտնում է Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ, վորպես դաշնակից պետություն։

Խորհրդային Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահը ընկ. Արտաշես Կարինյանն է։ Իսկ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահը ընկ. Սաքո Համբարձումյանն է։

11. Ընկ. Սարգիս Սրապիոնյան-ԼՈՒԿԱՇԻՆ.

Ընկ. Լուկաշինը Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալն է։

Ընկ. Լուկաշինին ճանաչում են և սիրում են Հայաստանի բոլոր բանվորներն ու գյուղացիները։ Նա յերկար ժամանակ աշխատել է Խորհրդային Հայաստանում նախ վորպես Կոմմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի քարտուղար և ապա Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ։

Խորհրդային Հայաստանի շինարարության հսկա աշխատանքը ղեկավարել է ընկ. Լուկաշինը։

Նորանոր ջրանցքների, էլեկտրակայանների, ճանապարհների կառուցման ծրագիրները մշակել և նրանց իրականացրել է ընկ. Լուկաշինը։

Այդ է պատճառը, որ ժողովուրդը նրան անվանում է Լուկաշին չինարար։

Ընկ. Լուկաշինը հին հեղափոխական բայլշևիկ է։ Ցարի ժամանակ նա միշտ հալածված է յեղել։

Այժմ նա 41 տարեկան է. ծնվել է 1884 թվականին։

Ընկ Լուկաշինը միաժամանակ մեր Կովկասյան Բանակի և ԽՍՀՄ Ռազմա-հեղափոխական Խորհրդի անդամ է։

---

12. «ՄԵՆՔ ՀԱՇՎԻ ԿՆՍՏԵՆՔ, ՅԵՐԲ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԸ ԿԾԱԾԱՆՎԻ».

1920 թ. մայիսն էր. Լենինականը հայտարարված էր խորհրդային։ Յերկաթուղու կայարանի վրա ծածանվում էր կարմիր դրոշը. առաջին գծի վրա փնչում էր հեղափոխական հունչով զրահապատը։ Ամենուրեք խինդ ու ծիծաղ, յեռուզեռ, կյանք ու կորով։

Հեռագրով խոսում էր ընկ. Մուսայելյանը—կարմիր ապստամբ բանակի հրամանատար Սերյոժան, գաշնակների ներքին գործերի մինիստր սատրապ Մանասյանի հետ։ «Մեքենայի մոտ ներքին գործոց մինիստր Մանասյանն է. հրամայում եմ զրահապատի հրամանատար Մուսայելյանին անհապաղ գալ Յերևան և ներկայանալ ինձ. ուշանալու կամ սույն հրամանը չկատարելու դեպքում կենթարկվի մահվան պատժի»։ Ուրախ քրքիջ բարձրացավ ընկերների շրջանում։ «Պատասխանեցեք,— կարդաղրեց պաշտոնյային ընկ. Մուսայելյանը,—ձեզ հետ խոսում է Հայաստանի կարմիր բանակի հրամանատար Մուսայելյանը. մենք հաշվի կնստենք, յերբ կարմիր

դրոշը կծածանվի Յերևանի վրա. մահվան պատժի սպառնալիք չեմ տա ձեզ, միայն թե սպասեք Յերևանի խորհրդայնացմանը»։

Բայց սատրապ Մանասյանը չսպասեց այդ ժամին. Ղազախի ապստամբության որերին նա գերի ընկավ և ստացավ իր արժանի պատիժը։

---

13. Ադրբեջան.

Ադրբեջանը անդրկովկասյան այն հարուստ յերկիրն է, որ դեպի իրան է գրավել հին ժամանակներից վոչ միայն ցարական կառավարության, այլ և յեվրոպական բոլոր մեծ ու փոքր թալանչիների ուշքն ու միտքը։ Նրա գլխավոր հարստությունը Բաքվի նավթն է—նավթահորերում չարչարվող բանվորի արյուն-քրտնքի արդյունքը։

«Եշը դատի, ձին ուտի»—ահա բոլոր թալանչիների քաղաքականությունը Ադրբեջանում։ Յերկրի հարստությունից ոգտվողը աղան, կապիտալիստը, կալվածատերը, խանն ու բեգն եր, թողնելով բանվորին տգիտության, քաղցի ու հիվանդությունների ճանկերում։

Միքանի անգամ Ադրբեջանի աշխատավորությունը փորձեց թոթափել իր վրա ծանրացող լուծը, շատ արյուն թափեց Հոկտեմբերի ազատությունը իր հետամնաց յերկրում իրականացնելու համար, մինչև որ 1920 թ. ապրիլին վերջապես պսակեց հաղթանակով իր ջանքերը և տվեց իշխանությունը խորհուրդներին։

---

14. Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն.

Վրաստանի Խորհրդային Հանրապետության կազմի մեջ մտնում են յերեք ինքնավար սոցիալիստական խորհրդային հանրապետություններ՝ Աբխազիա, Աջարիա և Հարավ-Ոսեթիա։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մենշևիկները Վրաստանը անջատեցին Խորհրդային Ռուսաստանից և իշխանությունն իրենց ձեռքն առան։ Նրանց որով Վրաստանը մի կատարյալ ճորտատիրական յերկիր դարձավ։ Աշխատավոր գյուղացիության և բանվոր դասակարգի վրին բազմել եյին վոչ միայն սոցիալ-դավաճաններ, այլ և

Նրանց իշխանությունը պաշտպանելու համար հրավիրված գերմանական և անգլիական զորքերը։

1921 թվականի փետրվարի 25-ին Վրաստանի աշխատավորությունը հուժկու թափով դեն շպրտեց մենշևիկական լուծը և XI բանակի ոգնությամբ դուրս վռնդեց յերկրից աշխատանքը շահագործողներին, հայտարարելով Վրաստանը խորհրդային։

---

15. Անդրկովկասի Ֆեդերացիան.

1922 թվականին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սոցիալիստական խորհրդային հանրապետությունները միացան և կազմեցին Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետություն։

Այդ հանրապետությունները 1918 թվականին մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների ղեկավարությամբ բաժանվեցին Խորհրդային Ռուսաստանից և անկախ ազգային հանրապետություններ կազմելով, սկսեցին հայ-վրացական, հայ-թրքական ազգամիջյան արյունահեղ կռիվներ։ Պարզ է, իհարկե, թե ինչով կվերջանար այդ մարդակեր քաղաքականությունը, յեթե 1920 թ. աշխատավոր դասակարգը չթոթափեր մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների ծանր լուծը և չհիմներ խորհրդային իշխանություն, դառնալով իր յերկրի և իր հարստության տերն ու տնորենը։

---

16. Ի՞նչ արավ Հոկտեմբերը.

Հայրը ծերացել եր. յերբ զգաց, վոր մահը մոտ է, կանչեց իր յերեք վորդիներին, տվեց նրանց մի մեծ ցախավել և առաջարկեց կոտրել ցախավելը։ Հերթով փորձեցին ավագ ու միջնակ վորդիները, արյուն-քրտինք թափեցին, բայց կոտրել ցախավելը չկարողացան։ Կրտսեր վորդին վերցրեց ցախավելը, քանդեց կապերը և հատ-հատ ճյուղերը հեշտությամբ ջարդոտեց։ Հայրը գոհ մնաց կրտսեր վորդու խելքից և առաջարկեց վորդիներին յերբեք չբաժանվել։

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը ցարական կառավարությունը խաղում եր Ռուսաստանի բազմամիլիոն բնակչության հետ, վորովհետև աշխատավորությունը բաժան-բաժան եր։ Հոկտեմբերը կապեց ազգությունների բանվորներին և գյուղացիներին իրար հետ և դուրս շպրտեց մեր յերկրից և՛ ցարին, և՛ շահագործող կապիտալիստին, և՛ կալվածատիրոջը, և՛ ձրիակեր հոգևորականին։

17. Ո՞վ է կառավարում Խորհրդային Միությունը։

Մեր խորհրդային պետության մեջ բարձրագույն իշխանությունը պատկանում է Համամիութենական Խորհուրդների Համագումարին։



Համամիութենական Խորհուրդների Համագումարի պատգամավորներից 41 տոկոսը բանվորներ էին, 29 տոկոսը՝ գյուղացիներ և 30 տոկոսը՝ մնացածները։

Համամիութենական Խորհուրդների Համագումարն ընտրում է Խորհրդային Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտե (Ս. Հ. Մ. Կ. Գ. Կ.) և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ (Ժողկոմխորհ)։

Լենինի մահից հետո Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ է ընտրված Ալեքսեյ Իվանովիչ Ռիկովը։



Ասացեք, վո՞ւմ է խորհրդային իշխանության բարձրագույն որգանը դավառում, դավառակում (գավմասում)։

---

18. Միութենական Խորհուրդների Համագումար.

1923 թվի հուլիսի 6-ին Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նստաշրջանին ընդունվեց Խորհրդային Հանրապետությունների Միության Հիմնական Որենքը (Սահմանադրությունը)։

Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ մտնում են՝ Ռուսաստանի Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետությունը (Ռ. Ս. Խ. Ֆ. Հ.), Ուկրայնայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (Ու. Ս. Խ. Հ.), Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետությունը (Ա. Ս. Խ. Ֆ. Հ.), Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (Բ. Ս. Խ. Հ.)։ 1925 թվին, Համամիութենական Խորհուրդների III-րդ համագումարին վորոշվեց կազմել Թուրքեստանից յերկու հանրապետություն՝ Ուզբեկստանի և Թուրքմենստանի։

Յերկու հանրապետություններն ել մյուսներին հավասար իրավունքով մտնում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ։

Համամիութենական Խորհուրդների Համագումարին յուրաքանչյուր դաշնակից հանրապետություն և ավտոնոմ շրջան տալիս է իր ներկայացուցիչները։

Կարմիր բանակը ևս իր պատգամավորներն է տալիս Համամիութենական Խորհուրդների Համագումարին։

Բուրժուական յերկրների զինվորը ձայնի իրավունք չունի. նա պատգամավորներ չի ընտրում։ Բուրժուական պետության զինվորն իրավազուրկ քաղաքացի յե։ Բուրժուազիայի մոտ ազատությունը բանվորների, գյուղացիների և զինվորների համար չե, այլ հարուստների։ Կապիտալիստական պետության մեջ իշխում է նա, ով շատ հող, գործարան և դրամ ունի։

Այլ բան է մեզ մոտ՝ բանվորա-գյուղացիական իշխանության մեջ։

Խորհրդի մեջ կարող են ընտրել ու ընտրվել միայն աշխատավոր գյուղացիները, բանվորները, կ.-բանակայինները և նավատինները։

Մեզ մոտ կ.-բանակայինը վոչ միայն իր պետության անդամն է, այլ և խորհուրդների պաշտպան պատվավոր քաղաքացի։ Կարմիր-բանակայինի ընտանիքին տրված են արտոնություններ։ Հարցրու քաղղեկին, և նա կբացատրի քեզ քո արտոնությունները։

---

19. Հոկտեմբերը—գեղջուկին.

Թե ինչ տվեց 17 թվի
Հոկտեմբերը գեղջուկին,
են որերը թե ինչ տվին
տանջված թշվառ խեղճուկին,
ահա կասեմ.—

Մինչ եղ որը վիզը ծռած
գեղջուկը՝ խեղճ, կիսամեռ—
աշխատում եր, գերի դառած՝
գարուն, ամառ թե ձմեռ։

Նա չուներ հող, նա չուներ արտ,
վոչ էլ հանգիստ ու դադար,
տանջանք ուներ և միայն դարդ
ու չարչարանք անդադար։

Աշխատում եր, վարում, ցանում
տիրոջ համար անկշտում,
զրկանքների բովում տանջվում,
միշտ անդադար, անհատնում։

Միշտ հնազանդ ու հպատակ՝
իր տեր՝ տերտեր-մեծերին,
միշտ յենթակա ու նահատակ՝
տանջանքներին, ծեծերին։

Ահա են մեծ Հոկտեմբերը
Նրանց կապերն արձակեց,
Նրանց համար ազատության
վառ արշալույս ստեղծեց։

---

20. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային հանրապետություն.

Մեծ են Խորհրդային Ռուսաստանի սահմանները և բազմազան ազգերն ու լեզուները։ Այնտեղ ապրում են բաշկիրները, թաթարները, կիրգիզները, դաղստանցիք, լեռնականները, բուրյատները, ժոնղոլները, կրիմցիք, յակուտները, չուվաշները, կալմիկները, կաբարդացիք և այլն և այլն, ամենքն էլ ներքին անկախ կառավարչական ձևով։

Խորհրդային Միության մեջ ամենաարդյունաբերական հանրապետությունը Խորհրդային Ռուսաստանի Ֆեդերատիվ Հանրապետությունն է իր Մոսկվա, Լենինգրադ և այլ բանվորական կենտրոններով։ Այնտեղ են գտնվում Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության խոշորագույն և հնագույն կազմակերպությունները, որի պատճառով էլ քաղաքացիական կռիվների տարիներում Ռուսաստանը խորհրդային իշխանության հենարանն է եղել։

---

21. Ուկրայնայի, Բելոռուսիայի, Ուզբեկստանի և Խորհրդ. Սոց. Թյուրքմենիայի հանրապետությունները.

Այս հանրապետությունները, որ այսոր միանգամայն անկախ պետություններ են Խորհրդային Միության մեջ, մինչև կարմիր Հոկտեմբերը ցարական բռնակալ լծի տակ տնքացել են 300 տարու չափ, իրենց լեզվի ու ազգային ինքնուրույնության կորստյան վտանգի առաջ միշտ կանգնած։

Քաղաքացիական կռիվների ժամանակ վոտնակոխ են եղել լեհական, գերմանական, սպիտակ-գվարդիական և այլ ավազակային արշավանքների ժամանակ, սակայն շնորհիվ այն բանի, որ միշտ սերտ կապ են պահպանել Ռուսաստանի հաղթանակող բանվորության հետ, վերջիվերջո կարողացել են մաքրել յերկիրը ավազակային արշավանքներից ու խորհրդային պատվանդանի վրա կանգնել բանվորա-գյուղացիական իշխանություն։

---

22. Լենինյան Կոմունիստական յերիտասարդական միություն (Կոմսոմոլ).

Հասակավոր բանվորական կազմակերպությունների հետ միասին զանազան յերկրներում գոյություն ունեն նաև աշխատավոր

յերիտասարդության կազմակերպություններ—նրանք կազմում են Լենինյան Կոմյերիտմիությունը։

Ցարի ժամանակ յերիտասարդական կազմակերպություն չկար. ցարական իշխանությունը խիստ հալածում եր ամեն տեսակի կազմակերպությունները։

Հոկտեմբերյան հեղափոխության մեջ յերիտասարդությունը շատ մեծ մասնակցություն ունեցավ և ամեն տեղ առաջին շարքերումն եր։

1917 թվին Մոսկվայում կայացավ Կոմյերիտմիության համառուսական I համագումարը։

Կոմյերիտմիությունը մեծ յեռանդով ոգնում է խորհրդային իշխանությանը նրա շինարարական աշխատանքների մեջ։

Կոմյերիտմիության ազդեցությունն ավելի մեծ է գյուղում. գյուղական յերիտասարդությունը կոմյերիտմիության ղեկավարությամբ առաջ է տանում գյուղի նոր շինարարությունը։

---

23. Կոմսոմոլի զատիկը.

Զատիկ բերեց կանաչ գարուն
մեր դաշտերին ու ձորերին,
աշխատանքը հնչեց յեռուն
մեր գյուղացու յերակներում։

Զատիկն յեկավ կանաչներով,
հաղթ ու կարմիր ջահելներով.
Կոմսոմոլն յեկավ գեղով
կարմիր խոսքով, կարմիր յերգով։

Տերտերները ահ ու դողով,
ֆարաջանները ուսերին
տափ են մտնում խորաններում՝
«տեր վողորմյան» բերաններում։

Կոմսոմոլը գեղի միջով
անցնում հպարտ ու խիտ շարքով
աշխատանքի հզոր յերգով
ամբողջ գեղը թնդացնելով։

Վողջունում է կարմիր գարնան,
վոր դուրս քշեց ցուրտ ձմեռվան.
վողջունում է աշխատանքը,
վոր ստեղծում է ամեն բան։

Ու յերգում է Կոմսոմոլը.—
«Աշխատանքի տոնն է եսոր.
տերտերները հեռու կանգնեն,
բավական է գեղին խաբեն»։

Ու յերգելով՝ գեղի միջով
անցնում են մեր ջահելները.
տերտերները ահ ու դողով
պահ են մտնում խորանները։

---

24. Կարմիր զինվորի յերգը.

Ցես զինվոր եմ կարմիր յերկրի,
ճակատս բաց ու հպարտ,
սուրս կարմիր, կտրուկ ու հաղթ
ու սվինս միշտ անպարտ։

Ճակտիս աստղը՝ հավերժ փայլուն,
ճամպես լուս է ու ուրախ,
ու յետևս՝ շարքեր կանգուն.
—Դեպի առաջ, դեպի կյանք։

Ու դրոշս ծածանում է
կապուտներում լայնարձակ.
—Առաջ, առաջ... Գնում ենք մենք
դեպի կարմիր հաղթանակ։

---

25. Առաջ յեվ հիմա.

I

ԹԱԳԱՎՈՐԻ ԶԻՆՎՈՐԸ.

Աղի արցունք եր թափում «նանը», յերբ վորդուն զինվոր եյին տանում։ Հառաչում, վողբում եր «նանը», վորովհետև սիրտը ցավում, մղկտում եր։

Ախր ինչու՞ փտել զորանոցներում. ում համար և ինչ նպատակով արյուն թափել։

Ստիպում եյին զինվորներին կռվել ներքին թշնամիների դեմ. Ցարական ստոր ժանդարմներն ու հլու կամակատարները հարկա-

դրում էին բանվորի և գյուղացու վորդուն կրակ բանալ իր իսկ հարազատների դեմ։

Դաժան գեներալների պատժիչ զորախմբերը քշում էին խեղճ զինվորներին հեռու, անծանոթ վայրեր, վորպեսզի արյան մեջ խեղդեն բանվորի և գյուղացու ըմբոստացումները։

Իսկ ինչ եր սպասում զորանոցում մուրճ ու մանգաղից կտրված պատանուն.

— Տուր ու դմփոց։

Մինթե զինվորը մարդ եր, կամ մարդատեղ եր դրվում. նա «անբան անասուն» եր, սոսկական զինվոր։

Հիշում եք հրապարակների, հասարակական տեղերի ցուցանակները.

«Սոսկական զինվորների ու շների մուտքն արգելվում է»...

Տրամվայների գրությունները.

«Սոսկական զինվորներին թույլատրվում է կանգնել միայն առաջի և յետևի բաժանմունքներում»։

Ապրանքատար վագոնների վրա գրվում եր՝ տեղավորվում են «8 ձի կամ 40 զինվոր»։

Իսկ ում եր մտածում զինվորների կրթության մասին։ Ցեվ ինչու պիտի մտածեյին։ Կրթված զինվորը հին կարգերի աչքի փուշն եր։

Նրան միայն սովորեցնում էին.

— Ովքե՞ր են պետության ներքին թշնամիները։

— Ջհուդները, ուսանողներն ու սոցիալները։

—Ո՞վ է պետության գլուխը։

—Թագավոր կայսրը։

Իսկ ինչպես էին վարվում զինվորի հետ. տանջում, չարչարում էին որնիբուն։

— Ցերկու ժամ վազել տեղում։

Ցեվ այս ամենը կատարում էին խեղճ զինվորները ահագին պայուսակը շալակած, ավազով ու խիճով լցրած։

Ցեվ գիտեք ինչու համար։

Պատիվ չի տվել մեծավորին կամ սրա նման մի ուրիշ բան։

Ինարկե, այս բոլորը համեմատած եյականի հետ՝ հասարակ,

անմեղ բաներ եյին. գլխավորն այն եր, վոր զինվորը նպատակ չուներ, նա վոչ թե իր հեռավոր տունն ու ոջախն եր պաշտպանում, իր քույրերին ու յեղբայրներին...

Վոչ, նա կռվում եր «թագավորի և հայրենիքի» համար, նա կռվում եր կալվածատերերի, բուրժուաների, իր վոխերիմ թշնամիների իշխանության համար։

Ահա այսպիսի աննպատակ ու անանական կյանք եր վարում նախկին զինվորը, «նորին մեծություններին ու գերազանցություններին» գռեհիկ ու տգետ միջավայրում...

II

ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐԸ.

Այդպես չե այժմ։

Այժմ կարմիր զինվորը հավասար քաղաքացի յե խորհրդային հանրապետությունների։ Ամբողջ յերկիրը սիրով ու գուրգուրանքով ե վերաբերվում կարմիր զորանոցին։

Մի մտեք յերեկոները զորանոցը։

— Այստեղ, այնտեղ, սեղանի մոտ, ընթերցարանում, թախտի վրա զբաղված են յերիտասարդները. վորը գրում ե, վորը կարդում։ Շատերն առաջին անգամն են կարդում՝ գիր կապելով։ Կարմիր բանակը—կյանքի և պայքարի դպրոց ե։

Կարմիր բանակն ավերիչ հարվածներ ե հասցնում անգրագիտությանը։

Կարմիր բանակը սերտ կապված ե բանվոր դասակարգի հետ... Տոն որերին գալիս են շեֆերը, փայլում են բանվորուհիների դեմքերը ժպիտով, կարմիր թաշկինակները փողփողում են, ընկերաբար ձեռները սեղմում—կռում կոփվում ե մուրճի, արորի և հրացանի ամուր դաշինքը։

Յերբեմն ամենահասարակ ընծան՝ թուղթ, մատիտ, բլոկ-նոտ՝ անհուն բերկրանք ու հրճվանք են պատճառում։ Մեծ ե ժողովրդի սերը դեպի իր զինված վորդիները։

Իսկ յերեխաների ընծանները կարմիր զինվորներին։ Ի՞նչ արժե մանկական այդ մաքուր, անդավաճան սերը։

Անսպառ ուրախություն ե տիրում, յերբ մանուկները հյուր են գալիս «Կարմիր բանակին»։

Ո՞վ կարող ե տոն որերին մոռանալ կարմիր զինվորին։—Վոչ վոք։

Կուլտուրան անսպառ աղբյուրով մտնում ե Կարմիր բանակ։ Գնացեք քննությանը—ձեր առաջ կբացվի մի ուսանելի տեսարան։

Ամեն մեկը լավ պատասխաններ է տալիս։

— Ի՞նչպես պետք է հրամանը կատարել։—

— Առանց տատանման, բայց գիտակցաբար։

Եթե կարմիր զինվորն անգրագետ է, հեռանում է իբրև գրագետ, լայն աշխարհայացքով, գրքերի մեծ կապոցով և ստեղծագործական արթնացած կարողություններով։

Կարմիր բանակը—կոլտուրայի ոջախ է։

Կարմիր բանակը—կոմմունիզմի դպրոցն է։

Կարմիր բանակը—խաղաղության գրավականն է։

Ով այսոր կարմիր բանակն է մտնում, նա արժանանում է սիրո և հարգանքի, իբրև առաջինը հանրապետության առաջնակարգ վորդիների մեջ։

---

26. Մայիսի 1-ը.

Դարերով ճնշված բանվոր գյուղացի
ընության ձեռքին տանջվում անտեղի.
հարուստ կուլակներ, հոգեհան դևեր,
բանվորի համար մահվան սարսափներ։

Բայց տեսաք ինչպես ընկան շղթաներ,
ցարի բռնության գահը կործանվեց.
ցարերի ձուլած շղթաներն ամուր
Կարմիր բանակը ինչպես ջախջախեց։

Եվ այժմ ազատ անցել ենք գործի.
մենք ենք իսկական տերն աշխարհի
և պիտի գործենք ազատ, համարձակ.
կեցցե՛ հաղթական կարմիր դրոշակ։

---

27. Կլիմենտ Յեֆրեմովիչ Վորոշիլով.

Ընկ. Վորոշիլովը ծնվել է 1881 թվականին։ Նրա հայրը գյուղացի բատրակ եր։

Ընկ. Վորոշիլովը սովորել է ժողովրդական դպրոցում յերկու ձմեռ։

15 տարեկանից սկսել է աշխատել գործարաններում։ Այդ

ժամանակվանիցել սկսվում է նրա հեղափոխական գործունեությունը։

Ցարական կառավարությունը նրան շարունակ հալածել է։ Նա շատ անգամ բանտ է նստել, աքսորվել է։ Տարիներով պարապ էր մնում. վոչ մի տեղ գործ չէին տալիս. նրա անունը մտած էր սև գիրք։

Ընկ. Վորոշիլովը լավ պատրաստված, յեփված, հաստատակամ բայլշևիկ է։ Բանվոր ընկերները նրան սիրում ու համակրում էին. զանազան պատասխանատու պաշտոնների և գործերի համար նրան



էին ընտրում հաճախ։ Նա իրան հանձնված գործը կատարում էր բարեխղճությամբ։

1918 թվականին ընկ. Վորոշիլովն ընտրվում է Ուկրաինայի ներքին գործերի ժողովրդական կոմիսսար։ 1919 թվականին նշանակվում է XIV բանակի հրամանատար։

Մինչև 1925 թվականը ընկ. Վորոշիլովը մի շարք չափազանց կարևոր և պատասխանատու պաշտոններ է վարել։

Ընկ. Ֆրունզեյի մահից հետո՝ 1925 թվականի նոյեմբերին ընկ. Վորոշիլովը նշանակվել է ԽՍՀՄ-ի Ռազմա-Հեղափոխական

Խորհրդի նախագահ և ռազմական ու ծովային ժողովրդական կոմիսար։

Ընկ. Վորոշիլովն իր ռազմական ծառայությունների համար պարգևներ և շքանշաններ է ստացել. յերկու կարմիր դրոշի շքանշան, վոսկի զենք, ժամացույց, մարտական զենք։

---

28. Մ. Վ. Ֆրունզե

(Կենսագրություն)

1925 թ. հունվարի 26-ին Խ. Ս. Հ. Մ. Ռազմա-Հեղափոխական Խորհրդի նախագահ նշանակվեց Միխայիլ Վասիլյևիչ Ֆրունզեն։ Միխայիլ Վասիլյևիչ Ֆրունզեն ծնվել է 1885 թվականին։ Նրա հայ-

ը գյուղացի յեր։ 12 տարեկան հասակում կորցնում է հորը և ստիպված է լինում մասնավոր դասերի միջոցով հոգալ թե իր և թե ընտանիքի ապրուստը։

Միխայիլ Վասիլյևիչ Ֆրունզեյի հեղափոխական աշխատանքն սկսվում է 1904 թվից։ Սկզբներում Ֆրունզեն մասնակցում է ուսանողական գաղտնի բանվորական խմբակներում։ Միխայիլ Վա-

սիլյևիչ Ֆրունզեն իր հեղափոխական աշխատանքի հենց սկզբից դառնում է ընկ. Լենինի համոզված հետևողը։ 1904 թվի նոյեմբերին նա աքսորվում է նոյեմբերյան ցույցին մասնակցելու համար։

1905 թվին մասնակցում է Մոսկվայի դեկտեմբերյան ապըստամբությանը. 1907 թվին ձերբակալվում է։

Ցարական իշխանությունը ընկ. Ֆրունզեյին յերկու անգամ դատապարտում է մահվան պատժի և միայն 5 անգամ դատելուց հետո նրան դատապարտում են 10 տարով տաժանակիր աշխատանքի։ $7^1/_2$ տարի անընդհատ նա նստում է զանազան բանտերում։ 1915 թվին նա աքսորվում է Սիբիր, ուր շարունակում է հեղափոխական աշխատանքը, վորի համար նորից բանտարկվում է, բայց շուտով փախչում է։ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ընկ. Ֆրունզեն բայշևիկների կուսակցության շարքերում տանում է պատասխանատու զինվորական և քաղաքացիական պաշտոններ։

1918 թվից մինչև 1924 թիվը Ֆրունզեն տարբեր բանակների ու ռազմաճակատների հրամանատարն է։ Սկզբում նա Կոլչակի դեմ կռվող 4-րդ բանակի հրամանատարն է, հետո արևելյան ռազմաճակատի, այնուհետև Թուրքեստանի ռազմաճակատի։

Ֆրունզեն եր, վոր Կոլչակին նեղը գցեց։ Նա մաքրեց Թուրքեստանը սպիտակներից։

1920 թվի ոգոստոսին Ֆրունզեն նշանակվում է հարավային ռազմաճակատի հրամանատար և ջարդում է Վրանգելին։ 1924 թվին նա նշանակվում է Խ. Ս. Հ. Մ. Ռազմա-Հեղափոխական Խորհրդի նախագահի տեղակալ և հետո արդեն Ռ.-Հ. Խորհրդի նախագահ։

1925 թվի հոկտեմբերի 31-ին Մոսկվայում սրտի կաթվածից մեռնում է ընկ. Ֆրունզեն։

Նրա անունը միշտ անմոռանալի կմնա Կարմիր բանակի մարտիկների համար։

---

29. Հանգստանալիս

Ոգոստոսի մի հով ու դուրեկան յերեկո յեր։ Յերկու զինվոր նոր եյին վերադարձել սովորական աշխատանքից և վրանում նըստած հանգստանում եյին։ Խոսակցությունից իսկույն կարելի յեր հասկանալ, վոր նրանցից մեկը՝ Գևորգը կարդացած, սովորած և շատ բան գիտեցող տղա յե, իսկ Լևոնը գյուղից է յեկել ու իր դութանից ու մանգաղից ավելի ուրիշ բան չի տեսել։

— Գիտես, Լևոն, թե մեր խորհրդային յերկիրը, վոր ասում ենք Խորհրդային Միություն, ինչքան է։

— Չե՛, յես ինչ գիտեմ։

— Ա՛յ, ասեմ, միտդ պահիր. մեր Միությունը ամբողջ աշխարհի մի վեցերորդ մասն է. նրանից դենը մեր թշնամի հարուստների տիրապետությունն է։

— Բա ինչի՞ մեր դեմ կռիվ չեն անում, վոր եղքան շատ են ու մեզ թշնամի։

— Ե՛, չգիտես բա, վոր 3—4 տարի կռիվ արեցին, դեռ մեր յերկրի հարուստներն ել նրանց միացան. միայն մեր բանվոր ընկերները, մեր Կարմիր բանակը բոլորին հաղթեցին։

— Չե՛ հա՛... բա ախը նրանք շատ-շատ են։

— Ճիշտ է, շատ են, բայց նրանց յերկրների բանվորներն ու գյուղացիներն ել մեզ նման աշխատավոր, քրտինք թափող մարդիկ են, նրանք են ժամանակն ել, հիմի յել մեր կողմն են պահում, դրա համար հարուստների բերանին սանձ է դրած։

— Հա՛,ա՛յ հիմի հասկացա։ Բա ինչի՞ յե եղպես, ենտեղ ել կոմունիստներ ու բոլշևիկներ կա՞ն։

— Կա՛ն, իհարկե կան. նրանց բանվորներն ու գյուղացիք իրենց կոմ. կուսակցության ղեկավարությամբ միշտ կռիվ են անում իրենց հարուստների դեմ։ Յերբ վոր նրանք ել կապիտալիստներ ու խորհուրդներ կուզենան սարքել, կգա՞ս ինձ հետ, գնանք նրանց ոգնելու։

— Գետնի տակին ել վոր լինեմ, նրանց ձայնը վոր լսեմ, նրանց ոգնության կհասնեմ,—ասաց վոգևորված Լևոնը։

---

30. «Թշնամիներ»

1918 թիվն եր։

Կռիվը նոր եր վերջացել։ Դևերոյուն լեռների յետևից դեռ դղրդում եյին թնդանոթները։ Որը մթնում եր ու ցրտում։ Վոտքից վիրավոր Հասանը սողում եր դիակների միջով։ Հանկարծ մի տնքոց լսեց. կանգ առավ, ականջ դրեց, թեքվեց դեպի ձախ և տեսավ մի շատ գեղեցիկ յերիտասարդ, մեջքը վիրավոր, ընկած է ու տնքում է։ Հասանը խղճաց նրան, մոտեցավ։ Յերիտասարդը հայ եր։ Արամայիսը,—այսպես եր նրա անունը,—ձեռքով կանչեց նրան և նշանացի հասկացրեց, վոր ուզում է ջուր խմել։ Հասանը հասկացավ, իր ջրի ամանը մոտեցրեց նրա բերանին։

Արամայիսը ջուրը խմելուց հետո խորը շնչեց, ուղղվեց, նստեց։ Հասանն էլ նրա կողքին նստեց։

— Վերջդ ծանր է, յեղբայր,—հարցրեց Հասանը։

— Այո, շարժվել չեմ կարողանում, կրակ ընկնի, պատերազմ հնարողի տունը։

— Հա, յեղբայր ջան, էդ ասա, էդ,—վոգևորվեց Հասանը,— ախր յես ինչ գործ ունեմ, վոր իմ գոմն ու մարագը թողել, յեկել եմ կռիվ։ Դե, դու ասա, հայ յեղբայր, դու ինձ ինչ ես արել, վոր մենք իրար սպանում ենք։

— Ե՜, յեղբայր, բոլորը, բոլորը սուտ բաներ է. ինչ ազգ, ինչ ազգասիրություն....խոսքեր են, դատարկ խոսքեր։ Մեր խմբապետներն ազգի անունով մեզ բերում են իրար հետ կռվեցնում, իրենք յետ ընկնում... Է, Թիկունքի գեղերումը քեֆեր անում... Ա՜խ, թե կլավանամ.... Յես հիմի ամեն բան հասկացել եմ։

— Յես էլ եմ հասկացել.... միայն ով գիտի, մենք կլավանանք։

— Անունդ ինչ է, յեղբայր։

— Հասան։

— Հա, Հասան աղբեր.—դե, արի մենք յերդվենք, վոր յեթե լավանանք, յեթե յետ գնանք մեր աշխարհները, ամենքին հասկացնենք, վոր հայ ու թուրք աշխատավոր ժողովուրդներն իրար թշնամի չեն, այլ բարեկամ։ Մեզ թշնամացնողը, մեզ կոտորել տվողը մեր կառավարություններն են։

Ու նրանք յերդվեցին։

Արամայիսը լավացավ, յետ յեկավ և իր խոստումը կատարեց. իսկ Հասանը.... չգիտեմ ինչ յեղավ։

---

31. Պարսկաստանում.

Սահմանն անցնելիս պահակներն առանձին նեղություն չտվին մեզ։ Նայեցին մեր անցագիրը և թողեցին։

Ճիշտ է, նրանց վերաբերմունքի մեջ վոչ մի անքաղաքավարի ու կոպիտ բան չկար, բայց ինչ-վոր անդուրեկան, խրտնեցնող բան կար նրանց խոսակցության ու ձևերի մեջ։

Դրանից հետո ամբողջ քսանյոթ որ ճանապարհորդեցինք Պարսկաստանում։ Նրանց ժողովուրդն աշխատասեր է, գործի ընդունակ, բայց խեղճ. նրանց կարգերը վերին աստիճանի հետամնաց են, յերկիրն անքաղաքակիրթ։

Յերկիրը բաժանվում է յերկու մասի—հյուսիսային, վոր գտնը-

վում է Խորհրդային Միության տնտեսական և կուլտուրական ազդեցության տակ, վորի կենտրոնն է Թավրիզ քաղաքը, և հարավային, վոր գտնվում է Անգլիայի ազդեցության տակ Թեհրան մայրաքաղաքով։

Պարսկաստանը հարուստ է բնական հում նյութերով, բայց արհեստը, արդյունաբերությունը և քաղաքակրթությունը շատ յետ

են։ Այնտեղ զարգացած է գորգագործությունը և հատկապես պրոդաբուծությունը։

Այժմ Պարսկաստանի ժողովուրդն սկսել է արթնանալ, և կգտորը, յերբ ինքն իր ձեռքը կառնի իր հարուստ յերկրի կառավարությունը։

---

32. Ավոն

Ավոյի տան
մի քընչում
քաղաքական
քչփչում։
Ավոն խելոք
ու արթուն
արձակուրդ եր
յեկել տուն։

Կարելի յեր
հիանալ.
քանի պալյակ
գեներալ
Ջարդել եյին
բանակում
յերկու գնդի
արանքում։

— Խելքս մի բան
չի կտրում,
Ավո,—Սիմոնն ե
ասում.—
ել ինչ Ֆլան
ու Ֆստան,
Ռումինիա,
Լեհաստան։
Մեր մեջ կռիվ
ել չկա։
Հաշտ ենք, բարիշ
մենք հիմա.
ինչ զուռնա յեն
ել փչում,
Կարմիր բանակ
մեզ կանչում։
Ավոն ասավ.
— Այ Սիմոն,
տո կովի պոչ,
չոր լիմոն,
վախում են չե՞
վրա գան,
գլուխները
տուրը տան։
Կարմիր բանակ՝
նրանց մահ.
վոնց են փախչում,
վա՛հ, վա՛հ, վա՛հ.
իսկ թե տրվի
հրաման,
վոր գնդերը
մեր տուն գան,
են ժամանակ՝
ել պրծար,
բայարները
կառնեն ծայր.
ենպես բաղնիս
կտան մեզ,
վոր հավի պես
կխաշվես։
Ել պետքը չե
եստեղ ճառ.
նրանց գալուն
այ պատճառ.
բայարները
չեն սիրում
բանվորական
պետություն,
վորտեղ չկա
ճորտություն,
վորտեղ բանվոր,
գյուղացին
տեր ե դարձել
իր հացին։

---

33. Գյուղ ու քաղաք—ուժը հավաք

Գյուղից քաղաք են տանում—հաց, միս, յուղ և ուրիշ սննդամթերքներ։ Քաղաքը պետք ունի գյուղի զանազան ապրանքների՝ վուշի, կանեփի—քաթան պատրաստելու, բազուկի—շաքար շինելու և այլն։

Քաղաքից գյուղ են փոխադրվում—շաքար, աղ, ասեղներ, թել, յերկաթ, մեխ և այլ ապրանքներ։

Գյուղի համար ել շատ բան է պետք—գութաններ, փոցխեր, գերանդիներ, մանգաղներ և զանազան մեքենաներ, վորոնցով շուտ է գործ տեսնվում։

Քաղաքում գրագետներն ավելի յեն։ Այնտեղ բարձրագույն դպրոցներ ել կան, վորտեղից դուրս են գալիս գյուղատնտեսներ, յերկրաչափներ, ճարտարապետներ և ուրիշ շատ տեսակի մասնագետներ։

Քաղաքումն են տպվում գրքեր, որացույցներ, լրագիրներ և ամսագիրներ։ Դրանցից է վոր իմանում ենք, թե ինչպես պիտի ուղղենք մեր կենցաղը, ինչպես գիտությունը գործ դնենք մեր ոգտին։ Դրանք հարկավոր են քաղաքին ել, գյուղին ել։

Քաղաքը չի կարող ապրել առանց հացի և ուրիշ սննդամթերքների. գյուղը ևս առանց քաղաքի անճարակ է. մի յերկու տարի գլուխ կպահի, բայց հետո փայտով պետք է վարի, ցանի։

Գյուղ ու քաղաք—ուժը հավաք։

---

34. Ոգնի՛ր կոոպերատիվի զարգացմանը

Մեզանում աշխատավորների իշխանություն է, բայց առևտուրը դեռևս բոլորովին պետության ձեռքը չի անցել։

Յերբ ամբողջ առևտուրն անցնի կոոպերատիվներին, այն ժամանակ ապրանքներն ավելի եժան կլինեն։

Կոոպերատիվը ուժեղ է իր անդամների շնորհիվ. դրա համար պետք է հաճախես կոոպերատիվի ժողովները, ոգնես նրան թե խորհուրդներով, թե գործով։

Միտդ պահիր հետևյալը.

1. Կոոպերատիվի վարչության համար չարչիներ և կուլակներ չընտրես.

2. Ամեն ինչ գնիր կոոպերատիվից, վոչինչ՝ մասնավորից.

3. Ինքդ անդամագրվիր և կանոնավոր վճարիր քո անդամավճարը։

4. Գիտցիր, որ կոոպերատիվը իր շահածը չի կրկնապատկում.

5. Հետևիր, որ կոոպերատիվում գրքեր ևս ծախվեն հասակավոր անգրագետների համար։

Հարց.— Կոոպերատիվի անդամ ես թե ոչ. գրեցեք տեղական կոոպերատիվ խանութի անունը և հասցեն.
Կազմեցեք ձեր ամսական ծախսերի ցուցակը.
Համեմատեցեք կոոպերատիվի գները շուկայի գների հետ։

---

35. Ջրի կաթիլի ճանապարհորդությունը

I

— Ա՜խ, ինչպես կուզեմ վերև բարձրանալ, վերև, շատ վերև, են սարի գլուխը, են ամպի մոտը, արևի քով, աստղերին հասնել,— ասաց մի կաթիլ։

— Ցես ել եմ ուզում, յես ել,— ձայն տվին ծովից շատ կաթիլներ.— վերև բարձրանալ, վերևից նայել, թե ինչ կա այստեղ յերկրի վրա։ Ենտեղից տեսնել սարեր, ձորեր, անտառներ, դաշտեր, քաղաքներ, ծովեր։ Ա՜խ, ինչ լավ կլիներ։

II

Արևը լսեց, տաք ճառագայթներ ուղարկեց, Ջրի կաթիլներին վերև կանչեց։ Մեր կաթիլները քիչ-քիչ տաքացան, անտեսանելի գոլորշի դարձան, վերև բարձրացան։

Նրանք շատ, շատ բարձրացան, սարերից ել վերև, ամպերին մոտեցան։

— Ենտեղ ինչ ցուրտ է,— ասաց մի կաթիլ և կուչ յեկավ.— վերևում դժվար է ապրել։

— Այո՛, այո՛,— ձայն տվին ամենքը.— ինչ լավ կլիներ, ամառվա պես ներքևում լինեյինք։

III

Արևը լսեց. ցուրտ քամի ուղարկեց։ Գոլորշիները ցրտից կուչ ու ձիգ արին, իրար մոտեցան, կամաց-կամաց սեղմվեցին իրար և տեսանելի ամպ դարձան։

— Ի՜նչ մութ ամպեր են,— ասացին մարդիկ ներքևում։

— Ես ինչպես ցուրտ է, ինչ պաղ քամի յե,—ասացին ամպ դարձած գոլորշիները, ավելի իրար մոտեցան, նորից կաթիլներ դարձան։

IV

— Բարև ձեզ, բարև, սիրելի ընկերներ,—ասացին կաթիլները իրար։—Ա՜յ, հիմա լավ է։ Ի՜նչ լավ յեղավ, վոր ելի կաթիլ դարձանք։

— Ի՜նչ լավ անձրև է գալիս,—ասացին մարդիկ յերկրի վրա։

Խումբ-խումբ կաթիլներ գոռում-գոչյունով ներքև են վազում, հողը պատառում, ծաղիկ ու ծառ արմատախիլ անում և առաջ գնում։

V

— Ի՜նչ սոսկալի հեղեղ է,—ասացին մարդիկ։

— Ցես շտապում եմ, շուտ ճամպա տվեք,—ասում էր հեղեղը և առաջ գնում։

Այսպես նա շատ առաջ գնաց, հասավ մեծ գետին։

Հեղեղն այստեղ շուտով կուլ գնաց ու սկսեց գետի հետ հանդարտ հոսել։

Մեր կաթիլներն այսպես վերջապես հասան ծովին՝ իրենց մոր գիրկը։

— Բարով յեկաք, իմ կաթիլներ,— ասաց ծովը և գրկեց նրանց։

---

36. Լեհական գործարանում

Գործարանից բարձր, կեղտոտ ու ծանր սավանի նման կախված եր յերկինքը։ Մանրահատ անձրևը թրջում եր կեղտոտ պատերը։ Ջուրը ներս եր մտնում գրասենյակ և վողողում պատուհանի փոշին։

Ջորս յերեխայի առաջ հրելով, գրասենյակը մտավ մի կին։

— Որհնվի ասածու անունը,—շշնջաց նա, նայեց գրասեղանների մոտից բարձրացրած գլուխներին և խոնարհվեց գործարանի կառավարիչ Բորովեցկու վոտքերի առջև։ Բորովեցկին ավելի մոտ եր կանգնած և ազդու արտաքին ուներ։

—Վողորմած, գթած աղա, յես ամուսնուս գործի պատճառով եմ յեկել. ժեքենան նրա գլուխը պոկեց, հիմի յես, թշվառ վորբս, յերեխաներիս հետ, աղքատ դրության մեջ եմ։ Ցեկա այստեղ խընդ-

բելու, աղա ջան, վոր վողորմաք ինձ . ·· խար մեքենան ամուսնուս գլուխը պոկեց, վողորմած աղա։

Ու նա նորից ընկնելով Բորովեցկու վոտքերը, սկսեց լաց լինել։

—Դուրս կորի, եստեղ այդպիսի գործերի տեղ չի,—աղաղակեց դրասենեկապետ Շվարցը։

—Լավ, կամաց,—գերմաներեն շշնջաց նրան Բորովեցկին։

—Ներողություն. բայց արդեն վեց ամիս է նա դադար չի տալիս. մեր բոլոր գրասենյակներն ու բաժանմունքներն է վազում։ Վոչ մի կերպ նրանից ազատվել չի լինում։

—Ինչու վերջ չեն տվել սրա գործին։

—Դեռ հարցնում է՞լ եք։ Են սրիկան դիտմամբ գլուխը դրել եր անիվի տակ. նա չեր ուզում աշխատել, նա ուզում եր կողոպտել մեր գործարանը։ Ու հիմի մենք պետք է վճարենք նրա կնոջն ու լակոտներին։

—Ա՜խ դու զվվելի, ի՞մ յերեխաներն են լակոտները,—աղաղակեց կինը կատաղած և հարձակվեց Շվարցի վրա։ Սա սեղանի յետևն անցավ։

—Կամաց, ա՛յ կնիկ։ Հանգստացիր. յերեխաներիդ ել հանգստացրու, վոր չգոռան.—ասաց նա վախեցած, ցույց տալով յերեխաներին, վորոնք մոր փեշերից կպած գոռում եյին։

—Վողորմած աղա ջան, ա՛յ, աշնանից սկսած շարունակ ման եմ գալիս, շարունակ խոստանում են, բայց բան չեն տալիս։ Ման եմ գալիս, խնդրում եմ, շարունակ խաբում են ու շան նման դուրս վռնդում։

—Հանգստացեք, եսոր յես կխոսեմ մեծ աղայի հետ. մի շաբթից հետո յեկեք.—ասաց Բորովեցկին դլխիցը հեռացնելու համար։

---

37. Ապրողների համար

Յոթանասուն տարեկան ծերունին պարտեզի մեջ տանձի ու խնձորի ծառ եր տնկում։ Շատ աշխատելուց խեղճը քրտնել, ջուր եր դառել։

Մի յերիտասարդ տեսավ ծերունուն և ասաց. «Ծերուկ, ինչու յես իզուր նեղություն քաշում, ինչու յես տանջվում, չարչարվում. մինչև այդ ծառերն արմատ բռնեն, մեծանան, պտուղ տան, դու կմեռնես»։

— Իհարկե կմեռնեմ,—պատասխանեց ծերունին,—բայց ինչպես յերևում է՝ դու կարծում ես, թե մարդ միայն իր համար պի-

տի աշխատի։ Վա՜չ, վորդիս, ուրիշների համար էլ պիտի մտածենք։ Ահա, տնկում եմ այս ծառերը։ Թող սրանք մեծանան, պտուղ տան։ Թող յես մեռած լինեմ, ինչ անենք։—Թող ուրիշներն ուտեն։

---

38. Արևը

(Մոտիկ անցյալից)

Լսեցեք, ընկերներ, յես կպատմեմ ձեզ իմ վոսկեհեր աղջկա մասին։

Նա հիվանդ եր։

Բժիշկը մտավ մեր բնակարանը, տխուր նայեց չորս կողմը, նայեց աղջկան ու ասաց.

— Խոնավ է, պետք է փոխեք ձեր բնակարանը, արևով սենյակ պետք է ճարեք։

Ու յես գնացի արև փնտռելու։ Շատ հեռու գնացի ու, վերջապես, գտա մի արևով սենյակ։ Բայց յերբ վերադարձա, աղջիկս ինձ կանչեց, ձեռս բռնեց ու փակեց աչքերը։

Կարմրած ու ցամաքած աչքերով գնացի արևի մոտ ասացի.

— Հզոր արև, մի մեծ բողոք ունեմ քո դեմ. ինչու՞ դու մի շողք անգամ խնայեցիր իմ աղջկան ու թողիր, վոր նա առանց արև մնա. դու սպանեցիր նրան։

— Վա՜չ,—ասաց արևը տխուր դեմքով.—յես մեղավոր չեմ.—գնա, հայտնիր ամբողջ աշխարհին, վոր վերևի հարկը խլեց արևի շողքերը, սավեր ձգեց ներքևի հարկի վրա ու սպանեց քո վոսկեհեր աղջկան...

---

39. Բանջարանոցի ոգուտը

Բանջարանոցը պահանջում է աշխատանք և գիտություն։ Բանջարանոցի համար լավ հող է պետք, ուժեղ պարարտացում, ջուր և լավ գործիքներ։

Բանջարանոցը պիտի պատրաստել աշունքվանից։

Մի կոկիկ բանջարանոց կարելի յե սարքել 80 մարգից, յուրաքանչյուր մարգը $1^1/_2$ արշին լայնության և 10 սաժեն յերկարության։ Ամեն մարգին 1 սայլ գոմի աղբ պիտի տալ։

Գլուխ կաղամբ 1 մարգը տալիս է 100 գլուխ՝ 5 կոպեկ արժողությամբ յուրաքանչյուրը։

Մի մարգը տալիս է 5 ռուբլի ոգուտ։

Մի մարգից 3 փութ սեխ է ստացվում՝ փութը 2 ռուբլի. ուրեմն մի մարգից 6 ռուբլի։

Մի մարգից 2000 հատ վարունգ է ստացվում, 100-ը 2 ռուբլի. ուրեմն մարգից 4 ռուբլի։

Բողկը ցանում են մարգի կողքերին. մի մարգը 50 կոպեկի բողկ միշտ տալիս է։

Հարցեր.—Կազմեցեք ապրուստակ ձեր սերմած բանջարների. վերքան եք հավաքում, վերքան ծախում և վերքան թողնում ձեր տնտեսության համար։

---

40. Կարտոֆիլ

Մեզանից 100 տարի առաջ գյուղացիք կարտոֆիլին սատանի խնձոր անունն էին տալիս և նրա ուտելը մեղք համարում։

Այժմ տեղեր կան, որ գյուղացու հողի մեծ մասը կարտոֆիլն է բռնում.

Կարտոֆիլ տնկելը շատ ոգտավետ է։ Մի դեսյատին կարտոֆիլը 3—4 անգամ ավելի ոգուտ է տալիս, քան հացահատիկը։ Կարտոֆիլին պետք է ուժեղ, թեթև և մաքուր հող։

Կարտոֆիլի հողը լավ մշակում են և տնկելուց հետո շարունակ քաղհանում, փխրացնում են։

Հաջորդ տարում կարտոֆիլի հողը շատ հարմար է հացահատիկ ցանելու, որովհետև անպետք խոտերը քաղհանվել են։ Կարտոֆիլի հողը պարարտացնում են մոխրով։ Կարտոֆիլից պատրաստում են ալյուր, շաքարաջուր, ոսլա։

---

41. Բամբակ

Հայաստանը բամբակ ցանելու լավ շրջաններ ունի։ Ցերևանի գավառում—Ղամարլու, Հրազդան, իսկ Եջմիածնում՝ Ղուրդուղուլի, Զանգիբասարի և Սարդարաբադի շրջանները։

Պատերազմների շնորհիվ բամբակի արդյունաբերությունը ընկավ։ Այժմ, յերբ բանվորն ու գյուղացին կպել են շինարար աշխատանքի, պետք է մեծ չափով բամբակ ցանել։

Ունենալով մեծաքանակ բամբակ՝ մենք հացի կարիք չենք զգա։

Խորհրդային Ռուսաստանը հաց շատ ունի, բայց բամբակ չու-

նի։ Ցերը մենք բամբակ ունենանք, ամեն ինչ կունենանք՝ հաց, հագնելիք, մեքենաներ, մանգաղ, գերանդի և այլն։

Այդ ամենն ել իրենց վոտքով կգան բամբակի մոտ։

Բամբակը թանգացել է թե Խորհրդային Ռուսաստանում և թե ամբողջ աշխարհում, իսկ հացն եժանացել է, ուրեմն այժմ ձեռընտու յե բամբակ ցանել և վոչ թե ցորեն։

Ի՞նչ կարելի յեր ձեռք բերել պատերազմից առաջ մի փութ բամբակով՝

Ցորեն 12 փութ,
կամ չիթ 70 արշին,
« նավթ 10 փութ
« աղ 30 փութ։

Ահա թե ինչու Հայաստանի բամբակագործության կոմիտեն աշխատում է բամբակի ցանքսերն ավելացնել։

---

42. Բերքի տոնը

Ի՞նչ եմ անում
վոսկի, արծաթ,
տոպրակներով
թուղթ, ստակ.

յես թև ունեմ,
թիկունք ունեմ,
յես կուռ ունեմ,
կուռ դաստակ.

յես հող ունեմ,
յես ջուր ունեմ,
ճակտի քրտինք,
վար-վաստակ.

Ձեռքիս տոնն է,
բերքիս տոնն է,
պիտի փայլի
աշխատանք,

յերգիս տոնն է,
փառքիս տոնն է,
առատ սեղան
պիտ բանանք։

Մժեղ, մրջյուն,
մեղու, թռչուն
իմ դաշտերի
բարեկամ,

յեկեք նստեք
իմ սեղանին,
շատ եմ խնդրում
ես անգամ։

Մաճ ու մաճկալ,
յեզ ու գոմեշ,
պողպատ մանգաղ,
սուր գերանդի
դաշտի մեջ,

արտում հնձած,
կալում ծեծած,
թոնրում թխած

փափուկ հացը
տաշտի մեջ.

սոխ ու սխտոր,
սեխ, ձմերուկ,
դդում, վարունգ
թաղի մեջ,

տանձ ու խնձոր,
նուռ, սերկևիլ,
նուշ, դեղձ, խաղող
բաղի մեջ

իմ Մանանը
գլխին դրած՝
տուն ե բերում
մաղի մեջ։

Բերքիս տոնն ե,
փառքիս տոնն ե,
պիտի զովենք
խաղի մեջ։

---

43. Բան չմնաց խեղճ ռամիկին

Որն ե հասել.
գեղջուկ, ռամիկ
արտն են հնձել,
հունձը փնջել,
բերել կալսել։
Ու կալի մեջ
դիզել շեղջ-շեղջ
վոսկի ցորեն։
Շարան-շարան
յերկնուց իջան
հավք ու թռչուն,
ծլվլացին
շուրջը կալին
ու բաժերնին
առան, թռան...
Յեկավ պարոն իր արտատեր,
կիսեց տարավ ցորենի շեղջ։
Իրար հետնուց յեկան հասան
թե գեղապետ
ու վարդապետ,
տերտեր, ժամհար,
պարտքի դիմաց,
ժամի համար,

հարկի դիմաց,
սրբի համար
առան տարան
իր աչքի լույս
վոսկի ցորեն։
Բան չմնաց խեղճ ռամիկին՝
լոկ ծեղ ու կուտ կալատակին։

---

44. Կարմիր յերդում

Հանդիսավոր խոսում բանվորա-գյուղացիական
Կարմիր բանակը մտնելիս.

1. Ցես, աշխատավոր ժողովրդի զավակս, Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության քաղաքացիս, ընդունում եմ բանվորական և գյուղացիական բանակի զինվորի կոչումը։

2. Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության և ամբողջ աշխարհի աշխատավորության առաջ յես պարտավորվում եմ պատվով կրել կարմիր զինվորի կոչումը, ուսումնասիրել ռազմական գործը և աչքիս լուսի պես պահպանել ժողովրդական և ռազմական գույքը փչացնելուց և հափշտակումից։

3. Ցես պարտավորվում եմ խստիվ և անշեղ պահպանել հեղափոխական կարգապահությունը և առանց առարկության կատարել բանվորական և գյուղացիական կառավարության իշխանությամբ նշանակված հրամանատարների բոլոր հրամանները։

4. Ցես պարտավորվում եմ հեռու մնալ և հեռու պահել ընկերներիս այն բոլոր արարքներից, վորոնք վարկաբեկում են Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության քաղաքացու արժանապատվությունը և իմ բոլոր գործողություններն ու մտքերն ուղղել բոլոր աշխատավորների ազատագրման մեծ նպատակին։

5. Ցես պարտավորվում եմ բանվորական և գյուղացիական կառավարության առաջին իսկ կոչին դուրս գալ պաշտպանելու Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միությունն ամեն տեսակի վտանգներից և նրա բոլոր թշնամիների վոտնձգություններից, ինչպես և Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության ժողովուրդների յեղբայրության և սոցիալիզմի գործի համար մղած պայքարում չխնայել իմ ուժերը և նույնիսկ կյանքս։

6. Յեվ յեթե յես չար մտադրությամբ հրաժարվելու լինեմ իմ այս հանդիսավոր խոստումից, թող ինձ վիճակվի ընդհանուրի արհամարհանքը և թող պատժի ինձ հեղափոխական օրենքի անողոք ձեռքը։

---

45. Ինտերնացիոնալ

Յելիր, ում կյանքը անիծել ե,
ով ճորտ ե, մերկ ե և ստրուկ.
արդեն վառվում են մեր սրտերը,
արդեն կռվի յենք մենք ձգտում։

Սա յե մեր վերջին կռիվը
և պայքարը մեր հին,
Ինտերնացիոնալը
աշխարհը կը փրկի։

Այս հին աշխարհը կը քանդենք մենք
մինչև հիմքերը և հետո
մեր նոր աշխարհը կը շինենք
մենք, ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ։

Սա յե մեր վերջին կռիվը... (կրկնել)

Վոչ վոք չի տա մեզ ազատություն—
վոչ խենթ հերոսը, վոչ արքան.
մենք պետք ե մեր ազատությունը
խլենք մեր ձեռքով սեփական։

Սա յե մեր վերջին կռիվը... (կրկնել)

ՀՀ Ազգային գրադարան
NL0943067

129

- 50 -

492
689